





Ջետադարձ կապ



Ձևավորող գնահատման քայլաշարը




Ի՞նչ է հետադարձ կապը

Հետադարձ կապը ուսուցման և ուսումնառության գործընթացում սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է:



Հետադարձ կապի նպատակը սովորողի ուսումնառության առկա մակարդակն ակնկալող վերջնարդյունքին հնարավորինս մոտեցնելն է:



Չետադարձ կապի տեսակները



1

Արտաքին

Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ կամ սովորող-սովորող կապերը: Ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրա-կանացիում են համապատասխան վերլուծություններ:

2

Ներքին

Ներքին հետադարձ կապը ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է: Ուսուցիչն ու սովորողը վերլուծում են սեփական գործողությունները՝ մատնանշելով առավելությունները և թերությունները:



Յետադարձ կապի միջոցները

Բանավոր. երբ վերլուծությունները և շտկումները կատարվում են բանավոր քննարկման միջոցով:

Գրավոր. երբ վերլուծություններն ու ուղղումներն իրականացվում են գրավոր կերպով:

Գծապատկեր. երբ ուսուցիչը հետադարձ կապը տալիս է գծապատկերների միջոցով:

Տեսագրություն և ձայնային հաղորդագրություն. երբ որակյալ տեսագրությամբ կամ ձայնագրությամբ կարճ և դիպուկ վերլուծություն է տրվում:

Արդյունավետ հետադարձ կապի սկզբունքները



01

Անհատական

Երբ սովորողը հասկանում է, որ ուղղորդող և շտկող հարցերն ուղղված են հենց իրեն, այլ ոչ ամբողջ դասարանին:

02

Օբյեկտիվ և նրբանկատ


Հետադարձ կապի միջոցով պետք է մանրամասն նկարագրել սովորողի գործողությունները և բացառել հուզական գնահատականը նրա կատարած քայլերին:

03

Պատճառների բացատրություն

Պատճառներ և բացատրություն. սովորողի կատարած քայլերի վերլուծությունը, այլ ոչ ուղղումը, թույլ է տալիս նրան ինքնուրույն հասկանալ և շտկել իր կատարած բացթողումները:

Արդյունավետ հետադարձ կապի սկզբունքները



04

Ճիշտ տեղին և ժամանակին

Ճիշտ տեղին և ժամանակին. Հետադարձ կապը պետք է տալ այն ժամանակ, երբ հարցերի ճշգրտումը տեղին է և ժամանակին:

05

Մոտիվացիայի ապահովում

Հետադարձ կապի մեջ պետք է շեշտադրել սովորողի ձեռքբերումները:

06

Կարճ և հետաքրքիր

Յուրաքանչյուր կատարված սխալի համար տրամադրել կարճ տեղեկություն՝ համեմելով խաղային կամ այլ հետաքրքիր տարրերով:

Չետադարձ կապի իրականացման հնարները


Չնար 1 «Սենդվիչ»

- Երբ խոսքը սկսվում է դրական արտահայտություններով, նշվում են աշխատանքի դրական կողմերը, սովորողը դառնում է ավելի բաց և ընդունող իրեն ուղղված հետադարձ կապին:

- Խոսքի մեջտեղում անհրաժեշտ է անդրադառնալ սովորողի կատարած այն քայլերին, որոնց շուրջ նա պետք է աշխատի և բարելավի:

- Վերջում ավարտել խոսքը մոտիվացնող մտքերով, որպեսզի սովորողն ունենա դրական տրամադրվածու-թյուն:

Մոտիվացնող խոսք




Չարգացնող տեղեկատվություն

Մոտիվացնող խոսք

Չնար 2 Չափանիշներ, սխալներ, արդյունք


Չետադարձ կապի սկզբում հիշեցնել այն կանոնը կամ չափանիշը, որին կարևոր էր հետևել առաջադրանքը կատարելիս և դրա չկիրառելու պատճառով սովորողը թույլ է տվել սխալներ: Այնուհետև մեկնաբանել, թե որտեղ է նա խախտել կանոնը: Սովորողի հետ քննարկել, թե ինչպես է կանոնի կամ չափանիշների կիրառումն ազդում արդյունքի վրա: Այդ տեղեկատվության շնորհիվ սովորողը հասկանում է, թե ի՞նչը պետք է փոխի և ինչու՞:



Հնար 3

Ձեռքբերում, ուսումնառություն, փոփոխություն

- Հետադարձ կապի սկզբում ուսուցիչը սովորողին տեղեկացնում է նրա ձեռքբերումների մասին:
- Միասին քննարկելով որոշում են, թե սովորողը որտե՞ղ է թույլ տվել բացթողումներ: Վերլուծության և քննարկման միջոցով գտնվում են ցանկալի արդյունքի ուղիները:
- Սովորողը կատարում է համապատասխան փոփոխությունները և ճշգրտում իր քայլերը:



Չետադարձ կապը կարելի է համարել արդյունավետ, եթե այն համապատասխանում է հետյալ երեք կանոններին

1. Ընկալում. երբ սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին:



2. Ընդունում. երբ սովորողը ստացած տեղեկատվությունն ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրանց հետ:

3. Չեռանկար. երբ սովորողն ունի ցանկու-թյուն ուղղելու սեփական սխալները և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Արդյունավետ հետադարձ կապն ավելի կարևոր է,
քան ուսուցումը:

Բիլ Գեյթս

